

Ա.Խ. Մայրապետյան, Ա.Ռ. Սերոբյան, Է.Դ. Սարգսյան, Ն.Ն. Թամբյան
ԽՈՐՀԵՆՈՒ IN VITRO ԵՂԱՆԱԿՈՎ ԱճԵՑՎԱԾ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ՀԻՂՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱՍ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Հայաստանի Հանրապետությունում խորդենին (Pelargonium) մշակվում է որպես տնտեսապես միանյա մշակաբույս՝ ամեն տարի տնկարկվող ջերմատնային պայմաններում արմատակալած կտրոններով: Մեր կողմից աշխատանքներ են տարվում in vitro պայմաններում այդ արժեքավոր մշակաբույսի Pelargonium Roseum և Pelargonium Capitatum x Pelargonium Radula տեսակների տնկանյութի արագ բազմացման և առողջացման ուղղությամբ: Որպես սննդարար միջավայր օգտագործվել են Մուրասիգե Սկուգի (ՄՍ) լրիվ և 1/2 նոսրացված լուծույթները: Սերմերի ցանքը կատարվել է ՄՍ 1/2 նոսրացված լուծույթի վրա առանց աճման հորմոնների՝ զարնանը, ամռանը, աշնանը: Աշնանային ցանքը ապահովել է 16 % սերմերի ծլունակություն, որոնց էքսպլանտներից in vitro պայմաններում ստացվել են կալլուսային հյուսվածքներ: Այնուհետև, ռեգեներացիայի հետևանքով աճած ընձյուղները հետագայում բազմացվել են միկրոկտրոնավորմամբ: In vitro պայմաններում 3-4 տարի անընդմեջ միկրոկտրոնավորման դեպքում չի նկատվել կտրոնների որակի վատացում: Արմատակալած 5-6 սմ բարձրության փորձանոթային միկրոբուսակների մինչև 98 % կլիմայավարժեցվել են հողում և պերլիտում, այնուհետև տնկարկվել բացօթյա հիդրոպոնիկայում՝ հրաբխային խարամ լցանյութի վրա: Կաշողականությունը կազմել է 93 %:

Վեգետացիայի ընթացքում բույսերը սնուցվել են օրական 2 անգամ՝ Գ.Ս. Դավթյանի կողմից առաջարկված սննդարար լուծույթով: Բույսերը ողջ վեգետացիայի ընթացքում եղել են առողջ, անկում չի նկատվել: Ինտենսիվ աճ և զարգացում նկատվել է հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Աշնանը (հոկտեմբերին) բերքահավաքի ժամանակ բույսերը ունեցել են 90-95 սմ բարձրության հասունացած ճյուղեր, որոնք արմատակալման նպատակով կտրոնավորվել և տնկարկվել են արհեստական խցիկում:

Վեգետացիայի ընթացքում բույսի աճի ու զարգացման զուգընթաց փոխվում է բույսի վերերկրյա կանաչ զանգվածում տերևների, ցողունների և թափոնի տոկոսային հարաբերությունը, որը բերքահավաքի ժամանակ կազմել է 55:42:3 %, համապատասխանաբար: Մեկ բույսից ստացվել է 1,757 կգ կանաչ զանգված, 1 քառ. մետրից՝ 17,57 կգ: Բույսի ընդհանուր կանաչ զանգվածում եթերայուղի պարունակությունը կազմել է 0,10, տերևներում՝ 0,187 %: Եթերայուղի պարունակության որոշակի տարբերություն է նկատվում ըստ տերևների հարկաշարքերի: Վերին հարկաշարքի տերևներում եթերայուղի պարունակությունը կազմել է 0,22, իսկ ներքինում՝ 0,15 %:

Աշնանը՝ հոկտեմբերին, ջերմաստիճանի նվազմանը զուգընթաց, խորդենու հասունացած բույսերը ծերանում են, ներքին հարկաշարքի տերևները սկսում են դեղնել և թափվել, որի պատճառով նկատվել է եթերայուղի պարունակության զգալի անկում: Այդ պատճառով բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում խորդենու բերքահավաքը պետք է կատարել օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում:

Ստացված մեկ տարվա նախնական արդյունքները ցույց են տալիս in vitro եղանակով խորդենու արմատակալների արտադրության հնարավորությունը և հեռանկարայնությունը:

S.K.Mairapetyan, A.R.Serobyanyan, E.D.Sarkisyan, N.N.Tambyan

HYDROPONIC CULTIVATION OF GERANIUM WITH THE PLANTING MATERIAL GROWN IN VITRO CONDITIONS

Summary

The feasibility and effectivity of the hydroponic cultivation of geranium microcuttings and seedlings, obtained under in vitro conditions has been studied. At the harvest time the plants had 90-95 cm height. The leaf:stem:waste ratio was 55:42:3%. The yield was 17.5 kg of green matter per m², wit the essential oil content of 0.1%.